



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 48

ՃԵՆԻԹ

28 ՅՈՒԼԻՍ 1907

ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ

ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ



ՋԵՆԻԹ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՁ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստիլի դիսարանից. 1903

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑԱՆԱԿ. — Անդամ ժուռնի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԲՈՑ ՀԱՄԱՐ.

Գ. ՄԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրջա-
ներու եւ գոհարեղեններու

ԹԻԻ 16 = ՊԱՇԷ-ԳԱՐՈՒ = ԹԻԻ 16

Օռոգար-Պաք հաստատութեան դիմացը

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ. Տ. ԷՔՄԷՔՃԵԱՆ ԵՂԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.

ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ


ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ ՋԵՆԻԹ

آ. آسادوریان) شرکت صتیبه مطبوعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառարանի թիւ 52

Հատր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտքի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտարի լաւագործութեամբ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:
Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան լաւառւտանց մէջ:

Վ Դ Ի Կ Ե Լ Ե Դ ՄԱՍՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՆՈՒՄՆԵՐ	ԲԵՐՍ.	(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
		(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.
	ԿԱԼԱԹԱ	(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
		(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
	ՊՈԼԻՍ	(1. Սուլթան համամ .
		(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .
	ՍԵԻՒՏԱՐ	Զարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն
Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւզդուլուի տունը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արտասահման	»	»	12 ֆր.
		»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՛

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասցէի Աստուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան և
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:
Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ, Մանտաբօսթով և կամ բօսթայի փոխով 20 հատը
20 ղրուշի հաշուով:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 48

ՇԱՐԱԹ

28 ՅՈՒՆԻՍ 1907

ՅԱՐԳԱՆՔԻ ՊԱԿԱՍԸ

Երկու հոգի գրատան մը ցուցափեղ-
կին առջեւ կեցած գրքերու անուններ
կը կարդային, անոնցմէ մին պատկեր
մը տեսնելով՝ հոն,

— Պա՛գ, պա՛գ, ըսաւ քովինին,
նաճի մէրհումըն ըէսմինէ պա՛գ, Ալ-
լահ ըահմէթ էյլէսին... Արժանաւոր-
ներուն Յարգանքի այս պատկառօա-
արտայայտութենէն հմայուած ձայնին
եկած կողմը նայեցայ. երկու գիրուկ
անձնաւորութիւններ էին, առոյգ ու
կայտառ: Անոնցմէ՝ որոնք իրենց
տարազով, խոհուն ու լուրջ դէմքով,
արտասանութեան ձեւերով, ուժեղ ու
պնդակազմ երեւոյթով վայրկենապէս
կը մատնեն աստեղացի չըլլալին: Գա-
ւառացիներ էին այդ երկուքն ալ. Անա-
տօլուի կոյս երկինքին տակ ծնած, ա-

նոր կենսատու օգովը, անոր վճիտ ջու-
րերովը ուռճացած:

Ու ասոնք, իրենց երկրին մէջ նա-
ճիին երե՛սն անգամ չի տեսած, լոկ
անունովը, համբաւովը միայն ճանչցած՝
Ալլահն ռահմէք էյլէսին կ'ըսէին, աղօթ-
քին է՛ն անկեղծը, մաղթանքին է՛ն
սրտաբուխը նուիրելով այն պատուա-
կան մարդուն անմահ յիշատակին, որ
գնահատելի ա՛յնքան ծառայութիւններ
մատուցած էր Օսմանեան լեզուին ու
գրականութեան խեղճուկ, աննշան ըն-
տանիքի մը է՛ն նշանաւոր մարդը հա-
նելով քիւ անձովը:

Բաւական օրեր անցան այս անկա-
րելոր դէպքէն ի վեր և տակաւին այն
հիանալի պատկերը չանհետիր երեւա-
կայութեանս առջեւէն, ու ամէն ան-

գամ որ կը լսեմ, կը կարդամ, կը տեսնեմ մեր կարգ մը անձնագով սնապարծներու անիմաստ կանչուըռուքը, աննշան գրչականերու շուրջալից պատգամները, անարժէք գաճաճներու ծաղրելի յաւակնոտութիւնները, այդ գաւառի զոյգ մը պարզուկ երախտագէտները կուգան միտքս, իրենց անկեղծագոյն մաղթանքով՝ Աղլան Բահմէք Կյուսին:

Մեծերու, հեղինակաւոր անձնաւորութիւններու, հոյակապ վարպետներու հանդէպ մեր թուրք հայրենակիցներու ցնուցած երախտագիտական զգացումները բացատրելու համար օրինակներ մէջ բերելու հարկ չկայ. ամէն Օսմանցի իր առօրեայ կեանքին մէջ հանդիպած է անշուշտ անոր մէկէ աւելի ցայտուն ապացոյցներուն: Հոս պզտիկ բաղդատութիւն մը միայն ընել կուզենք մեծերու հանդէպ մեր ու անոնց ունեցած վերաբերումի մասին:

Մեր մէջ, սկսած դպրոցի աշակերտէն, արհեստաւորին մշակը, վաճառականին պաշտօնեան, գրամատէրէն նպաստաւորուածը, խմբագրատան սկըսակը, մինչեւ եկեղեցականին փոքրաւորը, այն օրէն որ բաժնուի անկէ՝ ուրկէ կախում ունէր մինչեւ այդ ատեն, վայրկենապէս կը մոռնայ մինչեւ այդ օր վայելած ա՛յնքան խնամքները, հոգերը, ջանքերը, ու, ամբարտաւան յաւակնոտութիւնով մը, կսկսի նո՛յն իսկ արհամարանքով վերաբերուիլ անոր, որուն երախտագիտութիւն կը պարտէր: Երախտագիտութիւն՝ մանաւա՛նդ անոր համար որ, մէկդի դնելով ուրիշ ամէն բան, գո՛նէ, — մինչեւ իսկ իրեն չի հաւնելու չափ — դիրք մը, կացութիւն մը տուած էր իրեն. եթէ այդ

դիրքը առած չըլլար անկէ, եթէ անոր միջոցաւ չի ճանչցուէր հրապարակին վրայ, ի՞նչ բանի վստահելով պիտի յոխորտար:

Մեր մէջ, շատ քիչ բացառութիւնով, ճանչցող չկայ գրեթէ մեծին յարգը, վարպետին ջանքը և հեղինակին իրաւունքը: Ու, զարմանալին սա՛ է որ, մեր վարպետները, հեղինակները, մեծերը վերջապէս, աւելի՛ իրենց հասուցածներէն վստահած են քան ուրիշներէ. օրինակ կուզէք տեսէ՛ք արհեստաւորի մը աչկերտը որ ոսկի ապարանջանը ձեռք անցնելէ, անկախ ըլլալէ անմիջապէս վերջը առաջին գործը կընէ վարպետին վարկաբեկութիւնը, կործանումը, փճացումը՝ կարծես այդ գձուձ շահատակութեան մէջ փնտռելով իր յառաջացումի միակ գաղտնիքը: Ուրիշ օրինակ. առէք եկեղեցականը, որ սքեմը հագածին պէս, հանրութեան նպաստով կշտացածին պէս, անպատկառ երեւոյթ մը կառնէ ամէնուն հանդէպ, ամէն ինչ աննշան, ամէն բան պզտիկ կը տեսնէ իր շուրջը. հաւասարութեան վէճը կը մղէ իր մեծաւորին դէմ և եկեղեցականի գերագահութեան կռիւը՝ իր աշխարհական բարերար-խնամակալին հանդէպ:

Մեր թուրք հայրենակիցներուն մէջ երախտագիտական զգացումը շատ ու շատ տարբեր է մերինէն: Ամէն դասակարգի անհատ տեսակ մը անկեղծ պատկառանքով կը վերաբերուի միշտ անոր հանդէպ, ուրկէ նպաստաւորուած է ու է կերպով. ան, ինչ դիրքի, ինչ վիճակի, ինչ աստիճանի մէջ որ ալ գտնուի, չի մոռնար երբէք Ուստաջ հագգըն, Հօճալըգ հագգըն, Տահիլիֆ հագգըն. և ըն. ու, այս հագգը, իրաւունքը այսինքն, զոր ան՝ անհրաժեշտօրէն

կուտայ իր արհեստագետին, ուսուցչին ու հեղինակաւոր վարպետին, նուիրական բան մըն է իրեն համար. հետեւաբար ամէն անգամ որ հանդիպի անոնցմէ մէկուն, երախտագիտական ջերմ գգացումով մը, անհուն պատկառանքով մը կը մօտի անոր և անոր վարպետի ձեռքը կամ երեկը կը համբուրէ: Մեր թուրք հայրենակիցը ա՛լ աւելի յարգալից վերաբերում մը կուտենայ իր վախճանած մեծերուն հանդէպ, ու, ամէն անգամ որ հարկ ըլլայ անոնցմէ միոյն անունը յիշել, սըրտագին ու անկեղծ մաղթանք մը ունի միշտ իր շրթունքին վրայ:

Այլահ բահմէք էյիսին:

Նոյն բանը չե՞նք ըներ մենք ալ: Շիտակը՝ . . . :

ՅՈՎ. Է. Մ. ԱԶՆԱՒՈՐ

ԿԻՆԵՐԸ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Պտուղները՝ ծաղիկներու անկման կը պարտինք, իսկ կիններու անկումը՝ պտուղի մը:

* * *

Ծաղիկներու աշխարհին մէջ վաղըր յարգի է, իսկ կիններու աշխարհին մէջ էրիկ մարդը:

* * *

Կինները կաղնորնան երբ ծաղիկ կը դնեն և կը տգեղնան երբ ծաղիկ կը հանեն:

* * *

Կուղե՞ս ծաղիկները իրենց ամէնէն աղւոր վիճակին մէջ տեսնել, առտուն կանուխ արթնցիք. իսկ կիներ կան որոնց երեսը նայելու չես երբ առտուն կանուխ կարթնցնան:

* * *

Ծաղիկները իրենց հոտին համար կը սիրուին, կինները սիրուելու համար հոտ կուենան:

* * *

Ծաղիկները կը փեթտուին թերթ առ թերթ և կինները կը փեթտեն մերթ ընդ մերթ:

Յ. Ա. ՓԻՍԱՐ

Մեր սիրուած բանաստեղծ իմաստասէրին՝ Եղիա Տէմիրճիպաշեանի զուարթ գրուածքներուն համար զօրք մէկ քանի շաբաթէ ի վեր կը հրատարակենք, մեզ հասած բաղմաթիւ շնորհակալութիւններէն խրախուսուած, այս անգամ կրկին մաս մը կը հրատարակենք:

ԷՐԻԿ ԿՆԻԿ

Խալթ ըրինք կարգուեցանք: Ի՞նչ ալ ընես, տխար: Հար մար, քուր մը, ճանտան մէկը չունիս. օտարին ձառքն էս, չորապներդ կը պակսին, չապիկներդ կը պակսին, մինչեւ անգամ փարան ձեպէդ կը պակսի. որի՞ հարցունես, ուրկէ փնտռես: Սաղէդ սօլէդ չըռփմի՜չ կ'ընեն, տո՛ւր տո՛ւր, սօնը չի գար: Թահամիւր չըլլուի՜ր արթըր:

Անկէց ետքը, էյ մարդ էս. պէքեար կրնա՞ս ապրիլ մինչեւ ետքը. խաղէդատ կարգացիր լմացաւ. բարձը դիմացդ դիւր, երեսը նայէ, հետը խօրաթէ՛. կ'ըլլա՞յ մի: Աստուած մարդս չիֆթ ստեղծեր է նէ, բան մը գիտէ եղեր: Սանկ մատամըդ դէմդ կ'առնես, երեսը կը նայիս, նստուածքին ելլուածքին, աչքին ակընջին, պիլէկին պուռկունքին, մաղերուն մինի մինի ոտքերուն կը գմայլիս: Խօսք մը ան կ'ընէ, խօսք մը դուն կ'ընես. վախիթ է կ'ամսի. կեանքէն համ մը կ'առնես:

Տահա կնիկը չի՞նցած, եավրուն կը ձրգնի մախսըմը՝ . . . չորը փորը ըսելով կ'ելլաս կ'իյնաս մօրը հետ. խարբուղի պէս, պիլօռի պէս չօճուիս մը, կը պագնես, կը սիրես, չափալախ կը զարնես, չափ չափ, չաթ բաթ. էյ ճանըմ, մարդ. սըխըմի՜չ չըլլար հիչ տէյ իսէ: Չօճուիններէդ պըխմի՜չ եղա՞ր, կընիկդ, մատամըդ, եօլտաշդ. մատամէդ պըխմի՜չ ըլլալու ատեն չեն թողուր նօնօշներդ. ճուրղտելով, վազուըռտելով, ինալով, ելլալով, լալով թգկալով, մախամը ձգելով, պօռալով անուշիկ անուշիկ աչքիդ մէջ նայելով, էյ չես դիմանար, գիրկդ կ'առնես, հում հում կ'ուտես: Պօլ պօլ կը կերցնես չօլուխ չօճուխիդ, մարերնուն, էթրաֆ թարաֆ ունի նէ՝ անոնց ալ. կիւճդ չի գար. ասանկ կողոպտուել չէ ես: Հէմ շատ քեարըմ է կարգուիլը. մասրաֆդ կը քիչնայ: Հիմայ սէլի պէս կուգայ, սէլի պէս կ'երթայ կոր:

Իշտէ կարգուեցանք: Կարգս կատարուէր...: Ուրկէց էր դէմս ելան: Տավէթ, տավէթ՝ Կարապետ աղան. իւթիֆաթ, իգէթ, իքրամ, ա՛լ զիյաֆէթներ, ա՛լ չիմպալօներ. ա՛լ ի՞նչ բօլիթիքաներ՝ մեծէն պզտիկը, աղայէն ու մատամէն մինչեւ խըզմէթքեարը ու պէսլէմէն: Մէյէր մի՛տք ունին եղեր. մէյէր գլուխս բան փաթթելիք ունին եղեր. ի՞նչ բան է աս, Տէր Աստուած:

Արաւելսը մէյ մը, աղջիկ մը օրթան կ'ելլար. անո՛ր էղած պատիւը, ալ չի տեսնուած բան է, ամա անանկ պիլիմի մը կը բերէին որ՝ ինծի համար ալ անխըտար պատիւ ընեցին կը հասկցունէին: Խըպնոտ աղջիկ մը, ալերը կը հագնէր՝ սանկ խազաով էրէսն որ նայէի նէ: Ճերմակ, ամա ատ ճերմակին բէք աղէկ չէի ըսեր. անանկ ճերմակ մը՝ որ, ընտո՛ր ըսեմ, պատէն տահա ճերմակ. պօյը օրթա, խարէր, ամա քալած ատենը սանկ գիտես քի էրկրպագութիւն ընելու պէս կ'ընէր, պազի ալ իշնալու պէս կ'ըլլար, անճախ քի ինքզինքը կը բռնէր. մազերը գլխուն վրայ թաշմիշ կ'ըլլային, ատանկ մազի սրխութիւն չէի տեսեր էօմբիս մէջ (չիտակն ալ ըսեմ նէ՝ բէք տիխաթ չէի ըներ իկնիկներուն պօյին պօսին, թիւլին թիւսին.) մինակ քանի ան մազերը տեսնայի սիրտս սըխընթը մը կը կոխէր. հէմ ձեզի ըսեմ, սանկ գիտես քի սիրտս պուլանմիշ կ'ըլլար, ինծի անանկ կուգար որ մուռի հոտ մը պիւրիւնմիւշ կ'ըլլար, ինծի անանկ կուգար. ընտո՛ր հասկըցունեմ, սեւ լիֆ էր, խըթըն էր գիտես քի, փտած, սեւ ալ չէ, մութ մախսէնի, գերեզմանի մութ մը, ինծի անանկ կուգար, աչկերս կը գոցէի պազի: Ամա ա՛շք, ամա ա՛շք. նայէ աչկին ըսելիք չունիմ ճիշտիս մէջ, տամարներուս մէջ, իլիկներուս մէջ, կը պտըտէր. օնէ՛ պագըշ. պէ թող տո՛ւր. պէ ճիշտս փառալանմիշ կ'ըլլայ կոր, Աստուծոյ սիրուն, աս աշուրներդ գոցէ քիչ մը: Գոցեց իշտէ. էյ կէնէ կ'երիմ կոր, կրակը վիճուտիս մէջ ետեւումիշ կ'ըլլայ կոր, փառաւմիշ կ'ըլլայ կոր, մատուրներուս թէքէն ալէֆ կ'ըլլայ կոր: Եանկըն վար: Ընտո՛ր ինքզինքս բռնեցի տէ չի պօռացի, շաշմիշ կ'ըլ-

լամ հիմայ: Էրթալով բռնկեցաւ, էրթալով եայլան առաւ, առաւ:

Հոն չըլլար նէ, սիւքիւթ: «Եփրեմ աղա՛, ինչու չե՞ս խորաթեր կոր»: Նութխս բըռնուած է. խօսք չի կայ: Հասկցան վարպետորդիները. նաղլըցուն աղջիկը. սէյրէկ, սէյրէկ սկսաւ գալ. ան ալ, ետեւէն մարդ կուգար, անիտէ խայիպ կ'ըլլար: «Մարը հիւանդ է» կ'ըսէին: Ալ ո՛րը տահա էվէլ մէթ ընէ. իշտէ սանկ աղջիկ է, իշտէ նանկ աղջիկ է: Պուտալանե՛ր, առաջ կը գովէիք կը գովէիք. աղէկ. հիմայ ալթըն ատ խըտար գովաւանք պօշ պան է. խափըմիշ էղայ մէյ մը, պիտի առնեմ նէ ատ աղջիկը: Ամա չիւփէ կայ տայմա. չիւքէլէնմիշ կ'ըլլային: Տահա ո՛ր աղէկութիւնը ըսին. խօսմըռուկ է. հիշ սիրտ չի հատցուներ, ամէն բանի խաթլանմիշ կ'ըլլայ, խանաաթէհի է, ըռգէհի է: Անոնք գրաբառճա կ'ըսէին կոր, ամա աս էր ըսածնին, պազի Կարապետ աղան տաճիւրէնի կը դարձունէ, տահա պալլանտըրմիշ ընելով: Մարը հիւանդ է, անանկ կը դնէ կը վերցունէ որ, հէքիմները մատ կը խածնեն էղեր, անկէց զատ հիշ չես ըսեր քի տունին մէջ հիւանդ կայ. անանկ ոէկօլա գիտէ որ ինք մէյ մը խըզմէթը սըրային դնէ նէ, արթըն պէսլէմէները մաքինայի պէս կը դառնան:

Քանի՛ հոգի ուզողներ եղեր էն, շա՛տ, շա՛տ ուզողներ, հօրը հալը վախտը աղէկ, քիպար ֆամիլեա, տուններնին անանկ պալազի մարդ չի մտնար, բիւթիւն արծաթ թախըմներ, սանքի էս մալ ճանլը մէկը ըլլայի. աս բանին կիւճէնմիշ կ'ըլլայի ամա, անանկ պիլիմով մը կ'ըսեն որ՝ բան մը չես կրնար պէլլի պիլէ ընել. ամա շատ կիւճա կուգար կոր, տիւզճէ խըրս կ'ելլայի կոր. գրաբառճա գիտնայի նէ, ճօղապը կուտայի ամմա, նէ՛ չարէ:

Կը գովեն կը գովեն. աղջիկը էլմասէ պէպէք է: Աս Բուրուլին անունն է, աս Բուրուլը հիւանդութենէ խալըսեցաւ, աս Բուրուլին անկաճը ծակեցին, աս առդան քաշեցին, աս Բուրուլը գօլէճ մտաւ, աս գօլէճէն ելաւ, աս գօլէճին աղջիկներէն մէկը մեռաւ Բուրուլին սիրտը վեր էլաւ, էլմաս, էլմաս, հարը կուտայ, մարը կուտայ: Մա-

քապետներուն քովը սորվեցաւ. լեզու գիտէ . . . : Ադ տեղ քիչ մը կանկ առի. սիրտըս կըռչ մը ըրաւ. Բուքուլը լեզու գիտէ : Էյ ես լեզու չիտեմ նէ. տունս լեզու գիտցող մը գայ նէ՝ անոնք պիտի խորաթեն, ես աւանակի պէս պիտի նայիմ. ելլէ միսաֆիրը կէնձ մարդ ըլլայ, փառախ տղայ, ֆոէնկլիստանէն, ինկիլթէրայէն եկած ֆըռլ ֆըռլ կնկան էթրաֆը պիտի դառնան, խելքը գուլիէն պիտի առնեն, սողրա՞. սատանան փորս մտաւ : Լեզու գիտէ՞. ադ չեղաւ : «Ամա հիշ կ'ըսե՞ս քի լեզու գիտէ» : — «Էյ չէ. ինծի հետ պիտի խորաթէր» : — «Անանկ էհլի ըռզ աղջիկ. ֆռանսըզճա նամակ գըրիկ, ֆռանսըզները մէթ ընե՛լ մի. մինակ մարապետներուն բան ըսես նէ, կը նեղանայ» : — «Ադ աղէկ բան է. անոնցմէ բան սորվեր է. երախտիք գիտնալու է . . . :

Գովեստ գովեստ ինծի. մինչեւ ասօր Բուքուլը ուզողներուն մէջ ինծի պէս չնորքով մարդ չի կար. ես ինչ չուքս ծանր մարդ էմ էղեր, ինչ խելացի, ինչ խելացի, ինչ քիպար : Շատ ուսմունքը դաթը մախպուլ բան չի էղեր, ուսմունք կը սորվին տէ, ինչ կ'ըլլան էղեր, չի նայի՞ս, բէք բէք գրագիր. քար ձաթի վեց ոսկի առնէ՞ ուսումնական տղայ մը. անկէ վեր չելլար : Է՞ս, է՞ս, իմ հրամանիս տակ անանկ ուսումնականներ ունիմ էղեր. փարան վաստկողը էս էմ էղեր, մաքինան խուրմիշ ընողը՝ տօլապը դարձունողը՝ խալէն տանողը էս էմ էղեր, ես էվրորա ծնած ըլլայի նէ էղեր, նայիս ինչ կ'ըլլայի էղեր : Մտիկ կ'ընէի. ինծի շողքորդութիւն ըրին, եախոտ չիտակը ըսին՝ չիտում. ամա գիտես քի իրաւ ալ է ըսածնին. էբէյիճէ չիտակ է : Մենք ալ գրաբառճա եախօտ ֆռանսըզճա չիտենք տէյի, բէք ինքզինքնիս չը պզտիկցունենք : Խալէմը ուսումնականներուն ձառքն է, ումուռը մե'ր ձառքն է, գաճան մե'ր ձառքն է, փարան փառքը մերն է, մենք ենք վաստկողը, մենք ենք վաստկցնողը, անանկ չէ՞ մի եա :

Ե. ՏԷՄԻՐԱԴԻՊԱՇԵԱՆ



ԳՈՒՄ-ԳԱՓՈՒՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

ԱՆՄԵՂ ԿԱՏԱԿ

Այս վերնագրին տակ յօդուած մը գրելու համար բաւական է որ մարդ զոհէ ամառուան կիրակիներէն հատ մը և երթայ բազմիկ Գում-գափուցի կայարանին զբօսավայրը : Գում-գափուցի երիտասարդը ընդհանրապէս կամ ոսկերիչ կըլլայ և կամ Գալբագճըլարի գլուխը առօրնի :

Գում-գափուցի երիտասարդը մեր կարգ մը խմբագիրներուն պէս մեծ մարդոց թիւիը կ'առնէ և դժուար է գտնել հատ մը անոնցմէ որ կիրակի օրերը սեւ ուտէնկօթ մը անցուցած չըլլայ կռնակը :

Գում-գափուցի երիտասարդը իր վրայ մասնաւոր յատկանշական հով մը ունի, անանկ որ շատ դիւրաւ կրնայ զանազանուիլ քառասուն հատ տարբեր տեղացիներուն մէջէն, ինչպէս՝ Էնկիւրիի տանձը ուրիշ արտադրութիւններէն :

Տեղացի օրիորդներէն շատ աւելի եկեղեցատէր է ու եռաձայնի չափազանց մեռալը, պայմանաւ որ սակայն Մէհտէրեանինը ըլլայ ան :

Գում-գափուցի երիտասարդին՝ թավուլ մը խաղանք ըսէ, ու հոգին առ, այնչափ շատ կը սիրէ այդ խաղը և եթէ հարկ ըլլայ նոյն իսկ մինչեւ իրիկուն կը խաղայ մեքալիկնոց սուրճի մը համար :

Իբր գբօսավայր կը պարծենայ Բալլիին կազինօյով, ու ինքզինքը չափազանց ուրախ կզգայ այն օրը՝ երբ մէկ երկու գաւաթ օղի խմէ հոն :

Իսկ կիրակի իրիկունները եթէ քանի մը շրուշ աւելի ուտելու միտք ունենայ, անմիջապէս Բերա կ'անցնի, ու վերադարձին Ֆօսկօլօի գարեջրատան մէջ երկու գաւաթ պիտայով փորը կը կշտացնէ ու անանկ կերթայ տուն, պիւտճէն հաւասարակշռելու համար :

Ուրիշ տեղերու երիտասարդներէն շատ աւելի ընկերասէր է եթէ ըսենք՝ չափազանցութիւն մը ըրած չենք ըլլար, այս բանը

Գուժ-գափուցի երիտասարդին ունեցած բարեմասնութեանց առաջինն է:

Ընտանեկան կեանքն ալ ուրիշներուն նախանձը շարժելու աստիճան հաճոյալի է, այն-չափ հաճոյալի՝ որ շատ մը մայրեր կը փափաքին փոխանակ մէկ հատի՝ երկու աղջիկ զաւակնին մէկէն տալ անոնցմէ մէկ հատին:

Այս տողերուն համար կարծեմ բաւական զոհ պիտի մնան Գուժ-գափուցի սիրելի բարեկամներս. ՀԱՄՄԷ՞ . . . :

Գուժ-գափուցի երիտասարդը ամուսնանալու համար երբէք քսակին ցանքովի չըլլար, բաւական է որ այն տարիքին հասնի երբ մարդ ինքզինքը անկարող կզգայ ալեւս մինակ ապրելու:

Թէեւ միջնորդ կիները ամէնէն աւելի հոն կը վիտան, սակայն Գուժ-գափուցի երիտասարդը երբէք պէտք չունենար անոնց, ինք անձամբ կը գտնէ, կը հաւնի, կը սակարկէ, — մարդ Աստուծոյ պիտի ըսէք հիմա, արբազարիէն ձի կառնենք կոր — ու ամէն ինչ լիննալէն յետոյ «այս կիրակի խօսքկապ պիտի տանինք»ը միայն կըսէ իր ծնողքին:

Դրական մարդ է վիսսելամ:

Տասը փարային վրայ տասը քախլա նետելու չափ հաշուազէտ է, բայց շատ անգամ քեզի համար քեքը չի փնտռողներէն կրնայ համարուիլ:

Esprit փախցնել մի ըսի՛ր, այնչափ կ'ըլլայ, կարծես թէ ատոր համար ստեղծուած է Գուժ-գափուցի երիտասարդը:

Դիմացը ելլող աղջիկ մը պարապը չի հաներ, անպատճառ սրամիտ խօսք մը կ'ուղղէ և շատ անգամ աղջիկը խնդալէն մարեցնելու աստիճան յառաջ կը տանի սրամտութիւնը:

Տիրացու ըլլալու տրամադիր, հոգաբարձու ըլլալու փափաքող, իսկ թաղականութեան հոգի տուողներէն է:

Թաղական աղայի տիաղոսը զինքը աւելի երջանիկ կ'ընէ քան թէ երկաթուղիին առաջին պարգեւը:

Թէեւ շատ երիտասարդներ հինգշաբթի օրերը Ղալաթիոյ եկեղեցին աղջիկտեսի կ'երթան, սակայն Գուժ-գափուցին միայն . . . ուխտի համար կ'անցնի Ղալաթիա:

Սուռաէներուն բէքօլն է, իսկ պալօներուն լամբ Լիւսը:

Եթէ Գուժ-գափուցի երիտասարդը չըլլար, հաւատացէ՛ք որ պալօները շատոնց գոցուած էին Բերաի մէջ:

Գուժ-գափուցի երիտասարդը ընդհանրապէս միւզիկէի սիրահար կ'ըլլայ ու ամէնէն աւելի աֆօնօնի զարնելու փափաք մը կ'ունենայ:

Պարելու տեսակէտով շատ վարպետ է, և եթէ միւզիկ չի գտնուի, լան լան լիով վալսդառնալով իսկ կը գոհանայ:

Գուժ-գափուցի կինը իր տղուն վրայ գովեստով խօսած ատենը կ'աւելցնէ. «Ընհ, իմ տղաս ֆուք ալ մը կը խաղայ՝ քիմ, կազէթաները պիլէմ լեզու կ'ելան»:

Ինչե՛ր ալ կ'ըսէ խուշիկը:

ՆԵՐՇԱՊՈՒՀ

ԻՆՉ ԿԸՍԷ ԹԵՐԹԻՍ ՏՆՕՐԷՆԸ

✽

✽

ԱՏԱԲԱԶԱՐ. — Շիսակը ըսելով կը ցաւիմ հրապարակաւ յայտնել ցաւ մը՝ որ եօթը տարիէ ի վեր կը կոցայ, այն է Ասաբազարի բաժանորդներուն ծանրածեղութիւնը եւ կարգ մը գործակալներուն այդ գործը իրենց ապրուստի միջոց ընելին: Ասկէ առաջ Կարապէտ Պուրմայեան անուն մէկը, քերթիս Տնօրէնին հոգ զսնուած միջոցին ներկայացուելով հասարակութեան կողմէ իբրեւ պատուաւոր (.) ուղղամիտ (.) եւ գործոն (.) անհաս՝ խնդրեցին որ գործակալութիւնը իրեն յանձնեն: Այդ օրէն այսօր ՈՒԹԸ ՀԱՐԻԻՐ ՅԻՍՈՒՆ զրուցի պահանջ մը ունինք վրան, եւ որուն փոխան տեսնող մը չէ վճարած: Արդ վերջին անգամ կը դիմենք մեր նախորդ բաժանորդներուն՝ որպէս զի այդ մարդը համոզեն պատուաւոր կերպով վճարել տալիք, ապա քեզ Կառավարական օրինօք դատարան պիտի դիմենք, մէկին երկու պիտի ծախսենք, եւ չափի կեցնենք: այդ գումարը որ մեր արդար իրաւունքն է:



ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Հանրագիտակ չաբաթաթերթը որ լի ու լի կը փրկէ անունը, իր ծոցին մէջ կրելով գըրական բոլոր պէսպիսութիւնները և որուն էջերը օր ըստ օրէ կը պճնեն, նոր նոր ստորագրութիւններ առիթ կուտան ինձ մէջ բերելու յօդուած մը, 46րդ թիւին մէջ և որուն խորագիրն էր՝ Զուկին հոգեւարքը, էտմօն Սէֆէրէ:

Կանացի ծուրկ փափկանկատութիւնը չունիմ պէտք է ըսել, որպէս զի քաշուիմ աբական յօդուածի մը քրքրելու մէջ քաշուելու համար, քանի որ զիտեմ և համոզուած եմ թէ գրիչը սեռ չունի:

Էտմօն Սէֆէր, ճկուն, բայց քիչ մը չափազանց յուզեալ ոճով մը կուլայ կը կարեկցի իր աչքերուն դէմ դեռ նոր թռնուած խոշոր ձուկի մը հոգեւարքին վրայ, և այդ պատկերէն ներշնչեալ կը գրէ, նոյն իսկ ԱՆԳՈՒԹ կոչելով խեղճ ձկնորսը, որ այդ ձուկին մահուանը պատճառ եղած էր ու կայպանէ գինք:

Իրաւունք ունի՞ յօդուածագիրը: Ահա է՛ն կարեւոր հարցը այդ յօդուածին առթիւ:

Բժիշկը իր սուր նշտրակով չի խնայեր լացերու, կոծերու տարափին, ան իր գործին կը նայի, կը ճեղքէ, կը կտրէ, կ'արիւնէ, առանց զգալու, բոլորովին անտարբեր:

Արհեստներ կան՝ որոնք ցաւ կը պատճառեն դիտողին, և սակայն հացի խնդիրը կայ, որ կը մղէ այդ մարդիկը անխիղճ արարքներու, թէպէտ ատոնցմէ շատերէն բարիք կը ծնի:

Զկնորսը իր ընտանիքը պահելու համար ստիպուած է բռնել, ծովին կապոյտին մէջ ազատ համարձակ սուրացող անմեղ այդ կենդանիները, խիղճը ներէ թէ ոչ, անիկայ հարկադրուած է այդ անգթութիւններով ճարել հացը իրեններուն: Անիկայ ձուկին վըրայ կը նայի, թերեւս կը խղճայ ալ այդ կենդանիին վերջին վայրկեաններուն մէջ քաշած տանջանքները դիտելով, սակայն անիկայ իր զաւակացը և կնոջը կենդանի քապ-

լօն ունի աչքերուն առջեւ, որոնք հացին կսպասեն, կեանքին կսպասեն:

Այս առթիւ ներեցէք որ նոյն այդ ձրկնորսը նմանցնեմ մեր օրուան երիտասարդներուն և բռնուած ձուկերը մեր աղջիկներուն:

Քանի քանի երիտասարդներ կան այսօր, հրապարակին վրայ դիրք մը՝ անուն մը ունեցող, որոնք իրենց բան գործ ըրած են աս ու ան անմեղ աղջիկը գլխէ հանել, անոնց հետ լոկ ժամանակ անցնելու հաճոյքէն մղուած: Իրենց դիրքը, անունը, գեղեցկութիւնը և երիտասարդութիւնը գործիք ըրած, ինկած են կանացի շրջանակներուն մէջ և «ֆեզ պիսի առնել» խօսքը իբր կարթ գործածելով անմեղ ու անմիտ աղջիկներուն որսորդութեամբը կը զբաղին . . . :

Մէկը պիտի կրնայ համարձակիլ հակառակը պնդելու, և կամ ջրելու սա արեգակնային պայծառ ճշմարտութիւնը:

Այսօր մէկ երկու հատ չեն անոնք, որոնք պատճառ եղած են կոյս հրեշտակներու անողոք մահուան: Քանի՞ հատ, քանի՞նք կուգէք որ յիշեմ . . . :

Այս կարգի անխիղճներ, այսինքն աղջիկ որսացողներ պիտի ըսեմ, ամէնէն շատ կը տեսնուին բարեկեցիկ ընտանիքներու մէջ, չըսեմ Հայ-Լայժ, որոնք ինչպէս վերը յիշեցի, իրենց անունին և դիրքին ապաւինելով շատ դիւրաւ կը շահին սիրտը իրենց հաւնած օրիորդին, և անոնց մտքին ու սրտին մէջ տպաւորելով. «ֆեզ պիսի առնել» ի կեղծ ու պատիւ խօստումը, ժամանակ մը իբր զբօսանք վարելէ ու վայելելէ վերջ այդ անքիծ անուշութիւնները, կը լքեն, կը բաժնուին, ու կը մոռնան իրենց որսը: Ու ան, խեղճ աղջիկ, էտմօն Սէֆէրի նկարագրած ձուկէն ալ աւելի դառն, աւելի տիուր կանցնէ իր հոգեւարքի վայրկեանները, ժամերը, օրերը, ամիսները և թերեւս տարիները, և որուն վրայ նայելով խղճացողը, մայր մը կըլլայ, ուրիշ ոչ ոք:

Ան աղջիկը կը հալի, կը թոթուռուի, կը ծիւրի, ճիւղ նաւուն կուշտին վրայ նետուած ձուկին պէս, մէջէն, սրտէն հառաչներ կարձակէ ու վերջապէս օր մ'ալ զինքը կը տանին յանձնել ամենուս ընդունարանը՝ գերեզման:

Այս պարագան այնքան անգութ չէ ըստ իս, որչափ սա խօսքերը նոյն այդ հրէշին, նախորդ խափող երիտասարդին բերնէն ելած, որ կըսէ. «սիրած աղջիկս մեռեր է... վախ վախ վախ»:

Սիրած աղջիկդ, կամ սիրուած աղջիկ մը հէ՞...:

Անգութիւն, հրէշութիւն, Եամհամենբէն ալ աւելի մարդակերութիւն չէ՞ միթէ աս պարագան, որ դժբաղդաբար ամէն օր կը կրկնուի մեր ընտանեկան խաւերու մէջ:

Ձկնորսը անգութ կը գտնուի իր ընտանիքին բարեկաւութեան համար, իր զաւակաց հոգին համար, և որսին ի տես, որ հոգի կուտայ կը հարչարուի, այնքան կարեւորութիւն չի տար, չի նայիր իսկ: Արդ քանի՞ անգութ պէտք է ըլլայ ան որ, իր լեզուին կարթովը բռնած օրիորդը չոյելէ, գգուելէ, սիրելէ և որ աւելին է՝ անոր երջանկութեան նեկտարին համը կաթիլ կաթիլ վայելելէ վերջ մէկ վայրկեանի մէջ անդունդէ անդունդ, ցաւէ ցաւ, դժբաղդութենէ դժբաղդութեան կը մատնէ և ոչ թէ մօտէն, հեռուէն իսկ չի վերաբերուիր այդ վիճակին, չուզեր տեսնել կամ լսել հետեւանքը իր մեռցնող արարքին, ու միմիայն ի լուր մահուանն, կըսէ իր բարեկամներուն «սիրած աղջիկս մեռեր է», խօսք մը՝ որ սեւ պսակը կըլլայ հէգ աղջկան գերեզմանին վրայ:

Ձուկին հոգեւարքը դիտել մը զգայ և յօդուած մը ցրելու չափ կարեւորութեան ազդեր է յարգելի յօդուածագրին, արդեօք հատորներ չարել չարժէ՞ր այն բազմաթիւ հոգեւարքները՝ որոնք տուններու անկիւնը կը հեծեն այսօր լքուած, մոռցուած այն կարգ մը ստորին երիտասարդներէն — այսպէս պէտք է կոչել զիրենք — որոց հետ պահ մը կապուած, սիրած և խափած են ժամանակին:

Օրիորդ մը որսալը՝ մանաւանդ բարեկեցիկ և անուն ունեցող երիտասարդի մը համար, ձուկ մը որսալէն շատ ու շատ գիւրդին է

ըստ իս: Օրիորդներու սիրտը, լուսանկարչական բաքներէն շատ ու շատ աւելի զգայուն են, որոնք վայրկեանաբար կը ծծեն իրենց դէմը գտնուած պատկեր կամ խօսք, որը որ ըլլայ, և անգամ մը որ իւրացնեն այդ երկուքը, մինչեւ որ վերջ չիտան իրենց կեանքին՝ չեն սրբուիր, չեն աւրուիր:

Մեր մէջ սա ֆանաթիք համոզումը արմատացած է, այն է ծնողաց չափազանց անուիեօ վերաբերումը իրենց աղջիկներուն հետ: Ծնողք պէտք է իրենց չափահաս աղջիկներուն գիտցնեն բարոյն ու չարին պտուղը որ սէր կ'անուանի, պէտք է զգուշացնեն իրենց հարազատները այն կարգ մը մեղուաշան բզզիւններուն, ուրկէ մեղր կը յուսացուի և սակայն ճշմարտութիւնը սա է որ, բոլոր այդ անուշ թուած խօստումները լեղի արդիւնք յառաջ կը բերեն ուշ կամ կանուխ:

Կը փափաքիմ լըջօրէն խրատել իմ անփորձ քոյրերս, այս կենսական ինդրոյն վրայօք, լուսաբանութիւններ կուզեմ պարզել իրենց, բայց գիտեմ, համոզուած եմ թէ իմ գրիչս շատ տկար պիտի մնայ այն փայլուն և բռնաբիւ ձեւաբանութիւններուն մօտ, որոնք ամէն վայրկեան կը կրկնուին չիք երիտասարդներու կողմէ, և որոնցմէ չլանալը, չփանալը, աւալ որ շատ դիւրին է պէտք է ըսել:

Արդ ամփոփելով մեր միտքը, թող ներէ ինձ Տիար Էմմօն Սէֆէր, դիտել տալ իրեն թէ, նաւու մը անկիւնը ցնցուող ձուկին հոգեւարքէն աւելի յուզիչ պատկերներ կան տուններու մէջ՝ միջակորեար ընտանիքներու ծոցը, խարխուլ սենեակներու անկիւնը, մահճակալներու մէջ՝ իրական պատկերներ, աղջիկներ նոյն իսկ որոնք իրենց լքումը կուլան, խափկոնքը կողքան և իրենց ներսիդին անչէջ սիրոյ կօտուութեն ազատելու համար մեռնիլ կուզեն, մահը կերազեն:

Խնայեցէ՛ք... Խնայեցէ՛ք այն անմեղ հրեշտակներուն, ձուկին հոգեւարքէն աւելի աննեցուկ են: Հոգեւարքէն զգածուիլ դիտցէ՛ք, դուք որ մեր հակառակ սեռին պատկանելով հանդերձ՝ միշտ փափուկ սեռին հրեշտակային թեւերովը կը թռչիք:

ԾՈՎԱԲԱՂՆԻՔԸ

[ԶԸԲԸԼ ԶԸԲԸԼ ՅՕԴՈՒԱԾ]

Նա՛, դեռ անցեալ իրինկուն հանդիպեցայ իրեն, կամուրջին վրայ, կռնակը երկաթին տուած՝ ապուշ ապուշ չորս դին կը նայէր, ու երբ իրեն մօտեցայ՝ սոսկում երազէ մը արթնցողի պէս ցնցուեցաւ, աչքերը չփեց ու ըսաւ,

— Պէ՛տքս անհարկ կոր ... դրամ չա՛ծ եմ, վաղը առաւօտ կը տեսնուինք ...

Զբաղումը ինչ կրնար ըլլալ, իրեն չի հարցուցած պահ մը չորս դիւ նայեցայ ու չի կրնալով բան մը հասկնալ կրկին հարցուցի, այս անգամ հայրոյութիւն մը ստանալու աչք առած:

— Նա՛, մէռաքէն ելիր, իշտէ՛ ... կնիկ սէյր կընեմ կոր ... ծովի պանեօ գացողները կը դիտում կոր, ասկէ աւելի լուրջ, չահեկան և զբօսեցուցիչ թապլօ ո՞ր միւզիկին մէջ կրնաս գտնել, հապա բնականութիւնը ...

Պահ մը կարծեցի թէ խեղճ բարեկամս իր խելագործութիւն մէջ ունեցածն ալ վրայ տուած ըլլալու էր, բայց ... չէք զարմանար երբ ըսեմ թէ նոյն այդ կանացի անցուղարձը զիս ալ գամեց հող, արեւին ու ծովին դէմ, ու ես ալ սկսայ սըլըգ սըլըգ գալ ու դիտել այն demi-viergeները, որոնք Հայտար-փաշայի շողեմաւը կը մտնէին և կելէին ծովի լողանքի համար:

Հաւատացէք խօսքիս, կրնամ տասը մեթր երկայնութիւն և վաթսուոն սանթիմ շրջագիծ ունեցող օձի մը դէմ կենալ ու ժամերով նայիլ անոր պճըլ պճըլ աչքերուն մէջ, և սակայն երկու անգամ իրարու վրայ կնոջ մը ... ma parole d'honneur չեմ կրնար նայիլ: Ոչ կազդուիմ, ոչ կը սոսկամ, ոչ ցաւ կզգամ, ոչ ալ բան մը կիմանամ, և սակայն գիտեմ թէ կըլլամ բան մը՝ որուն ինչ ըլլալը ես ալ չեմ գիտեր:

Բարեկամիս հանդիպելուս առիթը տուն կուտայ ինձ իմ ընթերցողներուս նկարագրելու, իբր շարթուան նիւթ ծովաբաղնիք,

որ կարծեմ à propos յօդուած մը կրնայ համարուիլ, քանի որ այս եղանակին կրնեք նշատեր, տուներէն աւելի ջուրերուն մէջ կը գտնուին ... օռսէկներու պէս:

Զեր մէջէն, Ազնիւ ընթերցողք, ո՞վ կըրնայ կանանց բաղնիքը գտնուիլ ժամերով, առանց կռնակին ուտելու անուանի նայրնը բեօսիմալին մէջ ...: Բայց Զեր ծառան՝ մականուալն Լիւա, իբր բաւ-բաւքու ամէն տեղ կը մտնայ կելլայ, բացի այն տեղերէն՝ ուր արեւ չի տեսնար:

Ուրեմն քիչ մը զիս մտիկ ըրէք, որպէս զի ձեզի նկարագրեմ կանանց վիճակը բաղնիքին մէջ և անոնց բնական խօսակցութիւնը, բան մը որ քառասուն ոսկիով չէք կըրնար վայելել և որ պիտի լսէք ... 40 փառայով, եթէ սըլըլս օթլախճի մը չէք:

* * *

Ամէն բան տեսէք, նոյն իսկ ծովին ջուրերուն վրայ ծածանող սատկած կենդանի մը, բայց կնոջ մերկը ... jamais de la vie!

Ան կիւզէիմ տիկինները և օրիորդները, որոնց արտաքին թուալէթը ոտից ցգլուխ կը ցնցէ ձեզ, ճառթ դլխարկը, փլիսե ժիւքերը, ա ժուռ գուլպաները, քօռսէին սեղմումէն պիլեզիկ մէջքերը, դուրս նետուող կուրծքերը, թիւերու տակէն հարսնիքի մոմի պէս մարդ հալեցնող թեւերը, պօսմառօքի օյին ճախի պէս մինեօն տոտիկները, որոնց ամբողջութեան ի տես ապուշ ապուշ չողիք կը վազցնէք, և իրաւունք ալ ունիք չիտակը: Առանց թուալէթի կին մը՝ խաչած մաքառօնի կը նմանի, կնոջ թուալէթը անոր վերայի sauceն է որ համ հոտ կուտայ և ախորժակ կը բերէ զայն վայելելու համար: Սո՛ւս եմ:

Մեծ կենդանաբան մը, այր և կնոջ մերկ մարմինը ուսումնասիրելու համար փորձ մը ըրած է՝ խոշոր մըջլուն մը այր մարդուն ոտքին մատներէն մընչեւ մազերը ուղիղ գիծով

մը քաղեցուցած է ճիշդ մէկ ժամ եօթը վայրկեանէն, նոյն միջիւնին նոյն աշխատութիւնը կրկնել տալով կնոջ վրայ, ճիշդ երկու ժամ տասնը ութը վայրկեանէն լրացուցած է խեղճ կենդանին և հազիւ ճակատը հասած թէ չէ շունջը փչած է հող:

Այս գործնական փորձը կը հաստատէ կնոջ մարմնոյն ելեւէջները և բնականաբար տգեղութիւնը: Չէ:

Հիմա բոլոր ֆէմինիսթ տիկիները թող խմբագրատուն վազեն, ինչ վրէժ լուծելու համար, զորոնք պատուասիրելու համար... բազուկներս միշտ բաց պիտի ըլլան՝ օրուան բոլոր ժամերուն մէջ, բացի կիրակիէն, որ Սուրբ օր է մեզ համար:

